

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Յունիքոմփ» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Յունիքոմփ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնով: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀՀՄՍԻ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների

պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի

կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Լիլիթ Արարաջյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու



9 հուլիսի 2020թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	231,308	32,670
Ոչ նյութական ակտիվներ		807	499
Հետաձգված հարկային ակտիվներ	5	14,891	31,219
Կապակցված կողմերին տրված փոխառություններ	6	300,302	392,727
		<u>547,308</u>	<u>457,115</u>
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	258,345	275,822
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	117,642	96,634
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	78,932	18,947
		<u>454,919</u>	<u>391,403</u>
Ընդամենը ակտիվներ		<u>1,002,227</u>	<u>848,518</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուսպներ	10		
Բաժնետիրական կապիտալ		100	100
Կուտակված վնաս		(144,233)	(119,605)
		<u>(144,133)</u>	<u>(119,505)</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր	11	208,771	438,263
Վարձակալության գծով պարտավորություններ	12	191,109	-
		<u>399,880</u>	<u>438,263</u>
Ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս	11	334,727	83,299
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	390,355	446,461
Վարձակալության գծով պարտավորությունների ընթացիկ մաս	12	14,104	-
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		7,294	-
		<u>746,480</u>	<u>529,760</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>1,002,227</u>	<u>848,518</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. հունիսի 30-ին:

Արմեն Բալդրյան

Գործադիր տնօրեն

Կարինե Զախարյան

Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.		
Պայմանագրերից հասույթ	14	2,039,755	1,583,695
Վաճառքի ինքնարժեք	15	(1,686,253)	(1,366,394)
Համախառն շահույթ		353,502	217,301
Այլ եկամուտ	16	68,616	27,901
Իրացման ծախսեր	17	(62,803)	(58,679)
Վարչական ծախսեր	18	(144,551)	(135,309)
Այլ գործառնական ծախսեր	19	(60,031)	(78,543)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		154,733	(27,329)
Ֆինանսական ծախսեր, զուտ	20	(160,542)	(35,901)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս), զուտ	21	4,803	(1,165)
Վնաս մինչև հարկերը		(1,006)	(64,395)
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	22	(23,622)	19,491
Տարվա վնաս		(24,628)	(44,904)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(24,628)	(44,904)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	100	(74,701)	(74,601)
Տարվա վնաս	-	(44,904)	(44,904)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(44,904)	(44,904)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100	(119,605)	(119,505)
Տարվա վնաս	-	(24,628)	(24,628)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(24,628)	(24,628)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100	(144,233)	(144,133)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս
ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված
կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա վնաս	(24,628)	(44,904)
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն	28,125	6,009
Տոկոսային ծախս	160,666	57,008
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	23,622	(19,491)
Փոխարժեքային տարբերությունից վնաս/(օգուտ)	(4,803)	1,165
Գործառնական շահույթ/(վնաս) նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	182,982	(213)
Կապակցված կողմերին տրամադրված փոխառությունների փոփոխություն	18,639	(97,252)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(13,763)	250,734
Պաշարների փոփոխություն	17,477	(20,686)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(54,130)	(9,675)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	151,205	122,908
Վճարված տոկոսներ	(86,880)	(58,815)
Գործառնական գործունեությունից ստացված զույր դրամական միջոցներ	64,325	64,093

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(9,089)	(6,374)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(9,089)	(6,374)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության գծով պարտավորության վճարում	(12,769)	-
Բանկային վարկերից մուտքեր	550,593	819,328
Բանկային վարկերի մարումներ	(526,679)	(865,339)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	11,145	(46,011)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	66,381	11,708
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(6,396)	(1,027)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	18,947	8,266
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	78,932	18,947

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: